ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Արփինե Սարգսյանի՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներ (Դալլաս) գործուղման արդյունքների վերաբերյալ

Գործուղված պաշտոնատար անձ՝ Արփինե Սարգսյան:

Գործուղված անձի զբաղեցրած պաշտոնը՝ ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ:

Գործուղման վայրը և ժամկետները՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներ (Դալլաս), 2022թ. հոկտեմբերի 13-ից 20-ը:

Հրավիրող կողմը՝ ՀՀ-ում ԱՄՆ դեսպանության Թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության գրասենյակ:

Գործուղման նպատակը՝ Մասնակցություն ոստիկանության ոլորտի բարձրաստիճան տարեկան միջազգային համաժողովին (Ոստիկանապետերի միջազգային ասոցացիայի տարեկան համաժողով):

Քննարկված թեմաները՝ Միջոցառման ընթացքում քննարկվել են ոստիկանության ոլորտում մասնակից պետություններում առկա լավագույն փորձը, վեր են հանվել նշված ոլորտում առկա խնդիրները և քննարկվել դրանց լուծմանը համատեղ հասնելուն առնչվող հարցեր, միջազգային ասպարեզում արդեն իսկ տարվող աշխատանքները և ակնկալվող զարգացումները:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Արփինե Սարգսյանը Ոստիկանապետերի միջազգային ասոցացիայի տարեկան համաժողովին և ցուցահանդեսին մասնակցելու նպատակով 2022թ. հոկտեմբերի 13-ից 20-ը գտնվել է Ամերիկայի Միացյալ Նահանգներում (Դալլաս):

Ոստիկանապետերի միջազգային ասոցացիայի տարեկան համաժողովի շրջանակներում անցկացվել են քննարկումներ, թեմատիկ սեմինարներ:

Միջոցառման շրջանակներում անցկացվել են ավելի քան 200 կրթական նիստեր, որոնք կենտրոնացվել են ժամանակակից ոստիկանության գործունեության առանցքային կողմերի վրա: Հեղինակավոր համաժողովին մասնակցել են շուրջ 15.000 ներկայացուցիչներ աշխարհի տարբեր երկրներից, համաժողովը թույլ է տվել նաև ուսումնասիրել ժամանակակից ոստիկանության տեխնիկական հագեցվածությունը՝ համազգեստից մինչև սպառազինություն, որը ներկայացված էր համաժողովի շրջանակներում կազմակերպված լայնամասշտաբ ցուցահանդեսում: Բացի այդ համաժողովին մասնակցել են աշխարհի տարբեր երկրների ոստիկանապետեր, շահագրգիռ գերատեսչությունների բարձրաստիճան պաշտոնյաներ, որոնք հանդես են եկել ելույթներով՝ ներկայացնելով ոստիկանության ոլորտում իրենց երկրներում առկա լավագույն փորձը: Համաժողովի ընթացքում վեր են հանվել նշված ոլորտում առկա խնդիրները և քննարկվել դրանց լուծմանը համատեղ հասնելուն առնչվող հարցեր, միջազգային ասպարեզում արդեն իսկ տարվող աշխատանքները և ակնկալվող զարգացումները:

Ոստիկանապետերի միջազգային ասոցացիայի տարեկան համաժողովի շրջանակներում կայացած առանձին քննարկումների ընթացքում ՀՀ արդարադատության նախարարի տեղակալը տարբեր գործընկերներին ներկայացրել է ՀՀ-ում ընթացքի մեջ գտնվող բարեփոխումները, դրանց իրականացման շրջանակներում ծագած խնդիրներն ու տրված լուծումները, ինչպես նաև Ներքին գործերի նախարարության ստեղծման ուղղությամբ իրականացված և ընթացքի մեջ գտնվող աշխատանքները:

ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Արփինե Սարգսյանի՝ Ոստիկանապետերի միջազգային ասոցացիայի տարեկան համաժողովին և ցուցահանդեսին մասնակցելը հնարավորություն է ընձեռել ներկայացնելու ՀՀ ոստիկանության ոլորտում ՀՀ-ի փորձը, ծանոթանալու աշխարհի տարբեր երկրների ոստիկանության ոլորտում առկա լավագույն փորձին, ինչպես նաև՝ ուսումնասիրելու

դրանք ՀՀ-ում տեղայնացնելու հնարավորությունը, ինչն էլ իր հերթին կնպաստի ՀՀ-ում ընթացքի մեջ գտնվող ոստիկանական բարեփոխումների արդյունավետ իրականացմանը:

ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ

Recoverable Signature

X

Arpine Sargsyan

Signed by: SARGSYAN ARPINE 6404940545

Արփինե Սարգսյան

25.10.2022թ.